

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ՔՆ-ԲԸԱՇՁԲ-15/4**

ք. Երևան

12.2015 թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Է. Գևորգյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արարատշին» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Գ. Թովմասյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Երևանի կամերային պեդական թատրոն» պեդական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված փարածքում շինության կառուցման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը (առկա ֆինանսական միջոցների սահմաններում) սահմանվում է՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելուց օրվանից հաշված 100-րդ օրը ներառյալ:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն

պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերութունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև

անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են նախագծանախահաշվային փաստաթղթերում:

3.4.11 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված N 4) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 4 օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 20 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան՝ ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

## **5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 465687629 (Չորս հարյուր վաթսուհինգ միլիոն վեց հարյուր ութսունյոթ հազար վեց հարյուր քսանինը) ՀՀ դրամ, որից 77614605 (Յոթանասունյոթ միլիոն վեց հարյուր տասնչորս հազար վեց հարյուր հինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը

5.1.1 Պայմանագրի գնից՝ 11000000 (տասնմեկ միլիոն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.1.2 Մինչև 15.12.2015թ. պայմանագրային գումարի չիրացված մասը ամբողջությամբ՝ 2015թ. դեկտեմբեր ամսվա երրորդ շաբաթվա ընթացքում համապատասխան կանխավճարի ապահովում ներկայացնելուց հետո, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.1.3 Սույն պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝ 465687629 (Չորս հարյուր վաթսուհինգ միլիոն վեց հարյուր ութսունյոթ հազար վեց հարյուր քսանինը) ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է՝ Աշխատանքի մնացած մասը կկատարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն

պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2015 թ.՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է

անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման

պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


### Պ Ա Տ Վ Ի Ը Ս ՈՒ

ՀՀ քաղաքաշինության նախարարություն  
ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3,  
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական  
վարչություն  
Հ/Հ 900011002533, ՀՎՀՀ 02565827

### Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

<<Արարատշին>> ՍՊԸ  
Ք. Արարատ, Խանջյան 12  
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ,  
<<Արարատ>> մասնաճյուղ  
Հ/Հ 1150000119040100, ՀՎՀՀ 04000271

Աշխատակազմի ղեկավար



Տնօրեն՝ Գ. Թովմասյան



**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ**

«Երևանի կամերային պետական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության  
 ամրացված տարածքում շինության կառուցման աշխատանքներ  
**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| 1  | Աշխատանքների անվանումը  | չափ. միավ | քանակ | միավորի արժեքը | ընդամենը       |
|--|---|-----------|-------|----------------|----------------|
|  |   |           |       | ՀՀ հազ. դրամ   | ՀՀ հազ. դրամ   |
| 2  | 3   | 4         | 5     | 6              |                |
| <b>Գոյություն ունեցող շինությունների քանդում</b> |   |           |       |                |                |
| 1  | Գոյություն ունեցող շինությունների քանդում էքսկավատորով, բարձելով ավտոմեքենաների վրա     | խմ        | 309   | 0,855          | 264,20         |
| 2  | Մետաղական դարպասի ապամոնտաժում (պահեստավորում)  | քմ        | 9,6   | 3,96           | 38,02          |
| 3  | Շինարարի տեղափոխում 13 կմ հեռավորության վրա   | տն        | 494,4 | 2,603          | 1286,92        |
| <b>Ընդամենը</b>                                  |   |           |       |                | <b>1589,13</b> |
| <b>Կոնստրուկտորական մաս</b>                      |   |           |       |                |                |
| <b>ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ</b>                       |   |           |       |                |                |
| 1  | IV-րդ կարգի գրունտների քանդում փոստրակում ձեռքով  | խմ        | 126   | 3,60           | 454,11         |
| 2  | IV-րդ կարգի գրունտի քանդում փոստրակում 0.5 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով, կողիցք   | խմ        | 468   | 0,67           | 315,81         |
| 3  | Նույնը, բարձելով ավտոմեքենաների վրա   | խմ        | 666   | 0,85           | 569,18         |
| 4  | Գրունտի ետլիցք ձեռքով, տոփանումով   | խմ        | 60    | 1,46           | 87,51          |
| 5  | Գրունտի ետլիցք փոստրակ բուլդոզերով  | խմ        | 534   | 0,07           | 38,60          |
| 6  | Նույնի տոփանում օդաճնշական ձեռքի տոփանիչով  | խմ        | 534   | 0,28           | 151,11         |
| 7  | Ավելորդ գրունտի տեղափոխում 13 կմ հեռավորության վրա                                      | տն        | 889,2 | 2,60           | 2314,18        |
| <b>Ե/ՔԵՏՈՆԵ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻԱՆԵՐ</b>                  |   |           |       |                |                |
| 8  | Քետոնե նախապատրաստական շերտի պատրաստում B-12,5 դասի բետոնով                             | խմ        | 17    | 30,34          | 515,81         |
| 9  | ՀԾ-1, ՀԾ-2 Միաձույլ ե/քետոնե հիմնային հեծանների պատրաստում B-25 դասի բետոնով            | խմ        | 68    | 66,74          | 4538,62        |
| 10   | Ամրան Փ8A1c   | տն        | 1,327 | 377,89         | 501,46         |
| 11   | Ամրան 22A500C   | տն        | 4,173 | 369,49         | 1541,90        |
| 12   | Վերելակի հորանի միաձույլ ե/քետոնե պատերի պատրաստում 200մմ հաստության, B-25 դասի բետոնով | խմ        | 24    | 83,36          | 2000,69        |
| 13   | Ամրան Փ8A1c   | տն        | 0,062 | 377,89         | 23,43          |
| 14   | Ամրան 12A500C   | տն        | 2,731 | 369,49         | 1009,09        |
| 15   | Միաձույլ ե/քետոնե պատերի պատրաստում 200մմ հաստության B-25 դասի բետոնով                  | խմ        | 46,6  | 83,36          | 3884,67        |
| 16   | Ամրան 12A500C   | տն        | 4,289 | 369,49         | 1584,76        |
| 17   | Ամրան 14A500C , 16A500C   | տն        | 1,588 | 369,49         | 586,76         |
| 18   | Ամրան 18A500C---20A500C   | տն        | 0,691 | 369,49         | 255,32         |
| 19   | Միաձույլ ե/քետոնե կոշտության պատերի պատրաստում 200մմ հաստության B-25 դասի բետոնով       | խմ        | 52,3  | 83,36          | 4359,84        |
| 20   | Ամրան 12A500C   | տն        | 0,498 | 369,49         | 184,01         |
| 21   | Ամրան 16A500C   | տն        | 6,320 | 369,49         | 2335,20        |
| 22   | Ամրան 18--22A500C   | տն        | 6,272 | 369,49         | 2317,47        |

| 1  | 2   | 3   | 4      | 5      | 6               |
|----|---|-----|--------|--------|-----------------|
| 23 | Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-25 դասի բետոնով   | խմ  | 64,9   | 93,04  | 6038,33         |
| 24 | Ամրան ՓՑԱ1c   | տն  | 3,191  | 377,89 | 1205,85         |
| 25 | Ամրան 22---28A500C  | տն  | 12,840 | 369,49 | 4744,31         |
| 26 | Շրջանակների միաձույլ ե/բ հեծանների պատրաստում 550մմ բարձրությամբ B-15 դասի բետոնով  | խմ  | 106,9  | 74,53  | 7967,68         |
| 27 | Շրջանակների միաձույլ ե/բ հեծանների պատրաստում 750մմ բարձրությամբ B-15 դասի բետոնով  | խմ  | 9,6    | 71,43  | 685,76          |
| 28 | Ամրան ՓՑԱ1c   | տն  | 5,5    | 377,89 | 2079,16         |
| 29 | Ամրան 18---22A500C  | տն  | 15,698 | 369,49 | 5800,32         |
| 30 | Միաձույլ ե/բետոնե ծածկի սալերի պատրաստում B-25 դասի բետոնով   | խմ  | 126,4  | 61,12  | 7726,02         |
| 31 | Ամրան 12A500C   | տն  | 15,231 | 369,49 | 5627,77         |
| 32 | Ամրան 14A500C   | տն  | 3,51   | 369,49 | 1296,92         |
| 33 | Միաձույլ ե/բ աստիճանների պատրաստում B-25 դասի բետոնով   | խմ  | 23,2   | 78,11  | 1812,15         |
| 34 | Ամրան ՓՑԱ1c   | տն  | 0,823  | 377,89 | 311,01          |
| 35 | Ամրան 12A500C   | տն  | 1,88   | 369,49 | 694,65          |
| 36 | Միաձույլ ե/բ բարավորների պատրաստում B-15 դասի բետոնով   | խմ  | 0,38   | 67,73  | 25,74           |
| 37 | Ամրան ՓՑԱ1c   | տն  | 0,012  | 377,89 | 4,53            |
| 38 | Ամրան 18---22A500C  | տն  | 0,03   | 369,49 | 11,08           |
| 39 | Աստիճանավանդակ 3-ի միաձույլ ե/բ ՅԾ-1, ՅԾ-2, ՅԾ-3, հեծանների պատրաստում B-25 դասի բետոնով  | խմ  | 6,7    | 74,53  | 499,38          |
| 40 | Ամրան ՓՑԱ1c   | տն  | 0,278  | 377,89 | 105,05          |
| 41 | Ամրան 20A500C---28A500C   | տն  | 0,863  | 369,49 | 318,87          |
| 42 | 4 և 5 Աստիճանավանդակների միաձույլ ե/բետոնե պատերի պատրաստում 200մմ հաստության B-25 դասի բետոնով   | խմ  | 5,2    | 83,36  | 433,48          |
| 43 | Ամրան 12A500C   | տն  | 0,578  | 369,49 | 213,57          |
| 44 | <b>Դահլիճի նստատեղերի ե/բ կոնստրուկցիա</b><br>ե/բետոնե հատակի պատրաստում B-15 դ. բետոնով  | խմ  | 26,7   | 34,25  | 914,35          |
| 45 | Ամրան ՓՑԱ1c   | տն  | 1,274  | 377,89 | 481,43          |
| 46 | 200մմ հաստության միաձույլ ե/բետոնե պատերի պատրաստում B-15 դասի բետոնով  | խմ  | 19,7   | 74,84  | 1474,34         |
| 47 | Ամրան ՓՑԱ1c   | տն  | 0,955  | 377,89 | 360,89          |
| 48 | Միաձույլ ե/բետոնե ծածկերի պատրաստում B-15 դասի բետոնով  | խմ  | 7,0    | 52,47  | 367,31          |
| 49 | Ամրան ՓՑԱ1c   | տն  | 0,319  | 377,89 | 120,55          |
| 50 | <b>ՄԵՏԱՂԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ</b> Մետաղական ծածկի մոնտաժում +14.0 միջի վրա (պողպատե խողովակ, Երկտավր N14, պողպատե թերթ 8մմ. ամրան Փ16մմ) | տն  | 1,131  | 88,07  | 99,62           |
| 51 | Պողպատե խողովակ 100x100x4մմ   | զծմ | 33,6   | 4,65   | 156,08          |
| 52 | Երկտավր N14   | զծմ | 57,5   | 7,00   | 402,41          |
| 53 | Պողպատե թերթ 8մմ հաստութ.   | տն  | 0,072  | 465,27 | 33,50           |
| 54 | Ամրան 16A500C   | տն  | 0,031  | 369,49 | 11,45           |
| 55 | Մետաղական ֆերմայի մոնտաժում պողպատե խողովակներից 100x100x4մմ և 50x50x3մմ  | տն  | 0,874  | 83,95  | 73,37           |
| 56 | Պողպատե խողովակ 100x100x4մմ   | զծմ | 49,6   | 4,65   | 230,41          |
| 57 | Պողպատե խողովակ 50x50x3մմ   | զծմ | 57,4   | 1,61   | 92,60           |
|    | <b>ԸՆԴՀԱՆՆԵՐ</b>  |     |        |        | <b>81989,47</b> |
|    | <b>Ճարտարապետական մաս</b>   |     |        |        |                 |
|    | <b>ՊԱՏԵՐ</b>  |     |        |        |                 |
| 1  | Արտաքին պատերի շարուն 20սմ հաստութ. սնամեջ բետոնե բլոկներով, ամրանավորումով   | խմ  | 108,6  | 19,60  | 2128,74         |
| 2  | Ամրան 12A500C   | տն  | 3,4    | 395,16 | 1326,87         |
| 3  | Բլոկների անցքերի լցափակում B-15 դասի բետոնով  | խմ  | 27,8   | 35,13  | 976,14          |
| 4  | Արտաքին պատերի ջերմամեկուսացում պեռլիտե բլոկներով 100մմ հաստ.   | խմ  | 43,5   | 57,43  | 2498,21         |
| 5  | Սյուների և հեծանների ջերմամեկուսացում պեռլիտե բլոկներով 50մմ հաստ.  | խմ  | 27,2   | 57,43  | 1562,10         |
| 6  | Պեռլիտե բլոկների ամրացում պատերին 8A500 ամրանային ելուստներով   | տն  | 0,57   | 390,18 | 222,40          |

| 1  | 2   | 3   | 4        | 5      | 6       |
|----|---|-----|----------|--------|---------|
| 7  | Պատերի սվաղ ցեմենտի շաղախով ցինկապատ ցանցի վրայով   | քմ  | 793      | 3,19   | 2527,24 |
| 8  | Պատերի գունավոր տեքստուրային սվաղ 3մմ հաստ.<br>(«Դյուեֆա» Գերմանիա)   | քմ  | 718      | 5,73   | 4111,52 |
| 9  | Բետոնե մակերեսների ներկում ֆասադային ներկով   | քմ  | 166      | 0,58   | 95,81   |
| 10 | Պատերի երեսապատում տրավերտինե սալերով 30մմ հաստ.  | քմ  | 322      | 21,22  | 6834,10 |
| 11 | Կլոր սյուների երեսապատում տրավերտինե սալերով 30մմ հաստ.   | քմ  | 43       | 32,39  | 1392,94 |
| 12 | Գետնախարիսի երեսապատում բազալտե սալերով 30մմ հաստության   | քմ  | 29,8     | 19,69  | 586,91  |
| 13 | Պատուհանագոգերի տեղադրում բազալտե սալերից 40մմ հաստ.  | քմ  | 9,1      | 14,55  | 132,40  |
| 14 | Տրավերտինե բասալների տեղադրում 40մմ հաստության  | քմ  | 19,5     | 16,59  | 323,50  |
| 15 | Ղեկավարների տակի մասերի երեսապատում տրավերտինե սալերով 30մմ հաստ.   | քմ  | 22,2     | 23,23  | 515,78  |
| 16 | Պատերի երեսապատում ալյումինե «Ալյուկաբոնո» թիթեղով  | քմ  | 2,1      | 26,37  | 55,38   |
| 17 | <b>ՏԱՆԻՔ</b><br>Ջրամեկուսացում «Fidia Polyester» պոլիմեր-բիտումային թաղանթով ներքևի շերտ (տեղադրումով և նյութի արժեքով)               | քմ  | 293,2    | 4,42   | 1294,97 |
| 18 | Սույնի վերևի շերտ «Mineral Fidia Polyester»   | քմ  | 293,2    | 5,17   | 1514,87 |
| 19 | «Primer Ecover» քսուկային ենթաշերտ  | քմ  | 213,7    | 0,05   | 10,69   |
| 20 | Թեքստուրային շերտ թեթև բետոնով  | խմ  | 32,1     | 30,23  | 970,51  |
| 21 | Ամրանային ցանց 4Bp 100x100մմ  | քմ  | 213,7    | 1,25   | 266,16  |
| 22 | Գեոտեքստիլ  | քմ  | 213,7    | 0,83   | 178,08  |
| 23 | Ջրամեկուսիչ շերտ 30մմ հաստ. փրփրապոլիստիրոլային սալերով XPL Board   | քմ  | 213,7    | 4,17   | 890,42  |
| 24 | Գոլորշամեկուսիչ շերտ 30մմ հաստ. փրփրապոլիստիրոլային սալերով XPL Board   | քմ  | 213,7    | 0,83   | 178,08  |
| 25 | Շահագործվող տանիքների և պատշգամբների սալվածք 40մմ հաստ. բազալտե սալերով   | քմ  | 25,7     | 14,69  | 377,63  |
| 26 | Ջրհավաք ձագարների տեղադրում Φ100մմ  | հատ | 1        | 7,27   | 7,27    |
| 27 | Ջրահեռացման Φ100մմ խողովակների տեղադրում գունավոր թիթեղից   | գծմ | 5        | 3,33   | 16,65   |
| 28 | Տանիքի մետաղական աստիճանների մոնտաժում 0,65մ լայնության 11մ երկար.  | տն  | 0,25     | 629,10 | 157,28  |
| 29 | Մետաղական հեմակներ տանիքում սարքավորումների տեղադրման համար   | կգ  | 85       | 0,57   | 48,74   |
| 30 | Հորանների պատերի շարում 100մմ հաստ. սնամեջ բետոնե բլոկներով (ամրանավորումով)  | քմ  | 4,8      | 2,96   | 14,22   |
| 31 | Ամրան AI  | տն  | 0,006192 | 410,11 | 2,54    |
| 32 | Հորանների պատերի սվաղ ցեմենտ-ավազե շաղախով  | քմ  | 4,8      | 1,96   | 9,39    |
| 33 | Հովանոց ցինկապատ թիթեղից 0,7մմ  | քմ  | 1,6      | 5,81   | 9,30    |
| 34 | Թասակ ցինկապատ թիթեղից 0,7մմ  | քմ  | 21,7     | 4,57   | 99,12   |
| 35 | <b>ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱԿԵՊԱՏՈՒՄ</b><br>Վիտրաժներ ֆասադային M1 տիպի ալյումինե պրոֆիլներից երկշերտ ապակեպատումով, չբացվող փեղկերով թեք տեղադրում | քմ  | 100,1    | 89,5   | 8958,95 |
| 36 | Վիտրաժներ ֆասադային M1 տիպի ալյումինե պրոֆիլներից երկշերտ ապակեպատումով, թեք տեղադրված  | քմ  | 11,4     | 105,0  | 1197,00 |
| 37 | Ալյումինե պրոֆիլներից արտաքին վիտրաժի երկփեղկ դռներ, ջերմակամրջակով, երկշերտ ապակեպատումով  | քմ  | 6,9      | 72,0   | 496,80  |
| 38 | Ալյումինե պրոֆիլներից, ջերմակամրջակով, երկշերտ ապակեպատումով պատուհաններ բացվող փեղկերով  | քմ  | 11,6     | 60     | 696,00  |
| 39 | Ալյումինե պրոֆիլներից, ջերմակամրջակով, երկշերտ ապակեպատումով պատուհաններ չբացվող փեղկերով   | քմ  | 16,5     | 42     | 693,00  |
| 40 | <b>ԱՐՏԱՔԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ և ՀԱՐԹԱԿՆԵՐ</b><br>Աստիճանների երեսապատում 40մմ հաստ. տրավերտինե սալերով  | քմ  | 3,7      | 16,87  | 62,42   |
| 41 | Աստիճանաճակատների երեսապատում 30մմ հաստ. տրավերտինե սալերով   | քմ  | 2,1      | 15,75  | 33,07   |

| 1  | 2   | 3   | 4     | 5     | 6       |
|----|---|-----|-------|-------|---------|
| 42 | Հարթակների երեսապատում 40մմ հաստ. տրավերտինե սալերով  | քմ  | 4,9   | 13,83 | 67,76   |
| 43 | Աստիճանների կողային մասերի երեսապատում տրավերտինե սալերով 30մմ հաստ.  | քմ  | 2,1   | 21,30 | 44,74   |
| 44 | Բազրիքներ մետաղական, փոշեներկված h=900մմ  | գծմ | 10,1  | 44,02 | 444,60  |
| 45 | Բռնածող մետաղական, ամրացվող պատին, փոշեներկված  | գծմ | 3     | 2,21  | 6,62    |
| 46 | <b>ՀՍԱՎԿՆԵՐ</b> Մուտքի սրահի բետոնե հատակի իրականացում 150մմ հաստության   | քմ  | 43    | 5,24  | 225,18  |
| 47 | 20մմ հաստ. գրանիտե սալերով հատակների իրականացում 30մմ ցեմենտի շաղախի վրա  | քմ  | 104   | 23,74 | 2469,01 |
| 48 | Կերամագրանիտե (եվրոպական արտադրանք) սալերով հատակների իրականացում, սոսնձումով   | քմ  | 55,0  | 19,04 | 1047,13 |
| 49 | Նույնի, ցեմենտե հարթեցնող շերտ 20մմ հաստության  | քմ  | 55,0  | 0,84  | 46,42   |
| 50 | Ջրամեկուսացում «Masterseal 567» քսուկային նյութով (2շերտ)   | քմ  | 55,0  | 10,89 | 599,04  |
| 51 | Կերամիկական (եվրոպական արտադրանք) սալերով հատակների իրականացում սոսնձումով (սանհանգույցներ)                               | քմ  | 31,0  | 17,55 | 544,11  |
| 52 | Նույնի, ցեմենտե հարթեցնող շերտ 30մմ հաստության  | քմ  | 31,0  | 1,16  | 35,97   |
| 53 | Ջրամեկուսիչ շերտի պատրաստում հիդրոիզոլից  | քմ  | 31,0  | 2,96  | 91,64   |
| 54 | Կերամիկական, կամ կերամագրանիտե (չինական արտադրանք) սալերով հատակների իրականացում սոսնձումով                               | քմ  | 41,0  | 12,86 | 527,40  |
| 55 | Նույնի, ցեմենտե հարթեցնող շերտ 30մմ հաստության  | քմ  | 41,0  | 1,16  | 47,58   |
| 56 | Կովրոլինից, (ջերմապահպանիչ հիմնատակով) ալյումինե պոռֆիլով եզրակալած կովրոլինե շրիշակներով, հատակի իրականացում, սոսնձումով | քմ  | 151,8 | 6,51  | 988,07  |
| 57 | Նույնի, ցեմենտե հարթեցնող շերտ 40մմ հաստության  | քմ  | 138,0 | 1,48  | 203,82  |
| 58 | Հատակներ կաղնու տախտակներից, սոսնձումով   | քմ  | 72,0  | 23,34 | 1680,81 |
| 59 | Նույնի հիմնատակի պատրաստում խոնավակայուն ֆաներաից   | քմ  | 72,0  | 4,94  | 355,93  |
| 60 | Ինքնահարթեցվող հեղուկի փռում ֆաներայի տակ 10մմ հաստությամբ  | քմ  | 72,0  | 3,95  | 284,24  |
| 61 | Լամինացված մանրատախտակից հատակների պատրաստում   | քմ  | 50,0  | 9,68  | 484,16  |
| 62 | Փքված պոլիէթիլենի փռում   | քմ  | 50,0  | 1,12  | 55,91   |
| 63 | Նույնի, ցեմենտե հարթեցնող շերտ 30մմ հաստության  | քմ  | 50,0  | 1,16  | 58,02   |
| 64 | <b>Գրանիտե ջեռուցվող հատակ</b><br>Ջեռուցվող հատակի ցեմենտի հարթեցնող շերտ 70մմ հաստ.                                      | քմ  | 29    | 2,43  | 70,36   |
| 65 | Պոլիէթիլենային թաղանթի փռում  | քմ  | 29    | 0,47  | 13,63   |
| 66 | Ջերմամեկուսիչ շերտ 30մմ հաստության փրփրապոլիստիրոլե սալերով   | քմ  | 29    | 2,80  | 81,18   |
| 67 | Ջեռուցվող հատակի իրականացում (խողովակների տեղադրում և այլն տես նախահաշիվ թիվ 1-2 «Ջեռուցում»)                             | քմ  | 29    | 0,00  | 0,00    |
| 68 | Ցեմենտի հարթեցնող շերտ 70մմ հաստ.   | քմ  | 29    | 2,43  | 70,36   |
| 69 | 20մմ հաստ. գրանիտե սալերով հատակների երեսապատում 30մմ ցեմենտի շաղախի վրա  | քմ  | 29    | 23,74 | 688,47  |
| 70 | <b>Շրիշակներ</b> Շրիշակներ գրանիտե սալերից 100մմ բարձր. ցեմ.շաղախի վրա  | գծմ | 76    | 2,23  | 169,27  |
| 71 | Շրիշակներ կերամիկական սալիկներից 100մմ բարձր. ցեմ.շաղախի վրա (եվրոպա)   | գծմ | 53    | 1,42  | 75,44   |
| 72 | Շրիշակներ կերամիկական սալիկներից 100մմ բարձր. ցեմ.շաղախի վրա (չինա)   | գծմ | 60    | 0,96  | 57,55   |
| 73 | Փայտից շրիշակների տեղադրում 100մմ բարձրությամբ  | գծմ | 136   | 1,10  | 149,96  |
| 74 | Շրիշակներ ՄՂՖ սալերից 100մմ բարձրութ.   | գծմ | 101   | 0,76  | 76,72   |
| 75 | <b>Առաստաղներ</b><br>Կախովի առաստաղ 9,5մմ հաստ. գիպսասովարաթթե սալերից 60մմ մետաղական ստաղերի վրայով                      | քմ  | 243   | 10,28 | 2497,26 |

| 1   | 2   | 3   | 4     | 5           | 6       |
|-----|---|-----|-------|-------------|---------|
| 76  | Կախովի առաստաղ 9,5մմ հաստ. խոնավակայուն գիպսստվարաթղթե սալերից 60մմ մետաղական ստաղերի վրայով  | քմ  | 31    | 10,73       | 332,62  |
| 77  | Ղահլիճի ձևավոր առաստաղ նրբատախտակով, երեսված 9,5մմ հաստ. ՄՂՖ պանելներով   | քմ  | 118   | 17,34       | 2045,61 |
| 78  | Առաստաղների բարձրորակ ներկում լատեկսային ներկով   | քմ  | 385   | 2,04        | 785,49  |
| 79  | Առաստաղների բարձրորակ ներկում ջրաեմուլսիոն ներկով   | քմ  | 10    | 1,75        | 17,55   |
| 80  | Ե/բետոնե սալերի քսահարթում գաջով և ներկում ջրաեմուլսիոն ներկով  | քմ  | 58    | 2,87        | 166,37  |
| 81  | Աստիճանաբազուկների և հարթակների տակերի և կողային մասերի բարձրորակ սվաղ գաջի շաղախով   | քմ  | 87    | 3,85        | 335,11  |
| 82  | Սպասարկման դռնակներ առաստաղում  | հատ | 20    | 4,72        | 94,36   |
| 83  | <b>ՊԱՍԵՐ և ՄԻՋՆՈՐՄԱՆԵՐ</b><br>Սիջնորումներ 100մմ մետ. ստաղերով երկու կողմից երեսապատված 12,5մմ հաստ. գիպսստվարաթղթե սալերով           | քմ  | 7     | 10,3        | 71,94   |
| 84  | Սիջնորումներ 100մմ մետ. ստաղերով երկու կողմից երեսապատված 12,5մմ հաստ. գիպսստվարաթղթե սալերով ձայնամեկուսիչ շերտով                    | քմ  | 69    | 11,6        | 803,71  |
| 85  | Սիջնորումներ 100մմ մետ. ստաղերով երկու կողմից երեսապատված 12,5մմ հաստ. խոնավակայուն գիպսստվարաթղթե սալերով                            | քմ  | 12    | 11,2        | 134,74  |
| 86  | Սիջնորումներ 100մմ մետ. ստաղերով երկու կողմից երեսապատված 12,5մմ հաստ. խոնավակայուն գիպսստվարաթղթե սալերով ձայնամեկուսիչ շերտով       | քմ  | 51    | 12,6        | 642,55  |
| 87  | Սիջնորումներ 100մմ մետ. ստաղերով երկու կողմից երեսապատված 2շերտ 12,5մմ հաստ. գիպսստվարաթղթե սալերով ձայնամեկուսիչ շերտով              | քմ  | 124   | 17,4        | 2163,75 |
| 88  | Սիջնորումներ 100մմ մետ. ստաղերով երկու կողմից երեսապատված 2շերտ 12,5մմ հաստ. խոնավակայուն գիպսստվարաթղթե սալերով ձայնամեկուսիչ շերտով | քմ  | 30    | 19,4        | 580,55  |
| 89  | Պատերի երեսում մեկ կողմից 12,5մմ հաստ. գիպսստվարաթղթե սալերով 100մմ մետաղե ստաղերով   | քմ  | 657,5 | 6,28        | 4127,19 |
| 90  | Պատերի երեսում մեկ կողմից 12,5մմ հաստ. գիպսստվարաթղթե սալերով 100մմ մետաղե ստաղերով, ջերմամեկուսիչ շերտով                             | քմ  | 57,5  | 7,64        | 439,06  |
| 91  | Պատերի երեսում մեկ կողմից 12,5մմ հաստ. գիպսստվարաթղթե սալերով 60մմ մետաղե ստաղերով  | քմ  | 398   | 6,05        | 2408,16 |
| 92  | Պատերի երեսում մեկ կողմից 12,5մմ հաստ. խոնավակայուն գիպսստվարաթղթե սալերով 60մմ մետաղե ստաղերով                                       | քմ  | 12    | 6,55        | 78,59   |
| 93  | Սիջնորմների շարում 100մմ հաստ. սնամեջ բետոնե բլոկներով (ամրանավորումով)   | քմ  | 167   | 2,96        | 494,84  |
| 94  | Սիջնորմների շարում 20սմ հաստությ. սնամեջ բետոնե բլոկներով, ամրանավորումով   | խմ  | 1,9   | 19,60       | 37,24   |
| 95  | Ամրան   | տմ  | 0,228 | 410,11      | 93,37   |
| 96  | Բեմը ղահլիճից անջատող ֆերմայի երեսապատում 2շերտ 12,5մմ հաստ. գիպսստվարաթղթե սալերով   | քմ  | 139   | 8,68        | 1206,80 |
| 97  | <b>Պատերի և միջնորմների հարդարում</b><br>Պատերի և միջնորմների բարձրորակ սվաղ գաջի շաղախով   | քմ  | 61    | 2,940121986 | 179,35  |
| 98  | Պատերի բարձրորակ ներկում լատեկսային կիսափայլուն ներկով  | քմ  | 517,5 | 1,81        | 936,68  |
| 99  | Պատերի բարձրորակ ներկում լատեկսային փայլատ ներկով   | քմ  | 1066  | 1,95        | 2081,15 |
| 100 | Պատերի բարձրորակ ներկում ջրաեմուլսիոն ներկով  | քմ  | 404   | 1,51        | 610,05  |
| 101 | Սանհանգույցների պատերի երեսապատում կերամիկական սալիկներով (եվրոպական արտադրության)  | քմ  | 155   | 14,11       | 2187,70 |
| 102 | Պատերի նրբատախտակով երեսված 9մմ հաստ. ՄՂՖ պանելներով  | քմ  | 11,5  | 7,17        | 82,45   |

| 1   | 2  | 3   | 4    | 5      | 6        |
|-----|--|-----|------|--------|----------|
| 103 | Վերելակի դռան բացվածքների երեսապատում տրավերտինե սալերով 30մմ հաստության                                       | քմ  | 9    | 21,22  | 191,02   |
| 104 | <b>ՆԵՐՔԻՆ և ԱՐՏԱՔԻՆ ԴՈՆԵՐ</b><br>Ներքին փայտյա միափեղկ դռների տեղադրում  | քմ  | 26,5 | 92,84  | 2460,24  |
| 105 | Ներքին փայտյա երկփեղկ դռների տեղադրում   | քմ  | 2,6  | 92,84  | 241,38   |
| 106 | Ներքին մետաղական միափեղկ դռների տեղադրում  | քմ  | 18,8 | 51,87  | 975,07   |
| 107 | Ներքին հակահրդեհային մետաղական միափեղկ դռների տեղադրում  | քմ  | 14,9 | 51,87  | 772,80   |
| 108 | Արտաքին միափեղկ մետաղական ջերմամեկուսացված դռների տեղադրում  | քմ  | 4,9  | 57,53  | 281,88   |
| 109 | Այլումինե պրոֆիլներից երկփեղկ ապակեպատ դռներ   | քմ  | 2,6  | 72,00  | 187,20   |
| 110 | Ներքին վիտրաժ երկփեղկ դռով 12մմ հաստ. կոփված ապակուց   | քմ  | 12,8 | 80,00  | 1024,00  |
| 111 | Դռները փակող հատակի սարք Dorma BTS 75-V  | կ-տ | 1    | 190,00 | 190,00   |
| 112 | Դռան բռնակներ Dorma Orgo TG Pull Handled TG 9335   | կ-տ | 2    | 30,00  | 60,00    |
| 113 | <b>Ներքին ապակեպատում և պատուհանագոգեր</b><br>Ներքին այլումինե պատուհան բացվող փեղկերով                        | քմ  | 0,6  | 46     | 27,60    |
| 114 | Ներքին այլումինե պատուհան չբացվող փեղկերով   | քմ  | 2,4  | 30,0   | 72,00    |
| 115 | Լամինատե պատուհանագոգերի տեղադրում 250 x 40մմ չափերի   | զծմ | 2,9  | 6,2    | 17,86    |
| 116 | <b>ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆՂԱԿՆԵՐ և ԲԱԶՐԻՔՆԵՐ</b> Աստիճանների երեսապատում 30մմ հաստ. գրանիտե սալերով                        | քմ  | 2,5  | 30,5   | 76,20    |
| 117 | Աստիճանաճակատների երեսապատում 20մմ հաստ. գրանիտե սալերով   | քմ  | 1,3  | 25,9   | 33,68    |
| 118 | Հարթակների երեսապատում 20մմ հաստ. գրանիտե սալերով 30մմ ցեմենտի շաղախի վրա                                      | քմ  | 3,6  | 23,9   | 86,12    |
| 119 | Աստիճանների երեսապատում հատուկ պրոֆիլի կերամիկական սալերով   | քմ  | 37,5 | 22,5   | 842,78   |
| 120 | Աստիճանաճակատների երեսապատում կերամիկական սալերով  | քմ  | 19,8 | 17,8   | 352,15   |
| 121 | Հարթակների երեսապատում կերամիկական սալերով   | քմ  | 59,5 | 17,8   | 1058,23  |
| 122 | Շրիշակներ կերամիկական սալիկներից 100մմ բարձր. ցեմ. շաղախի վրա (եվրոպա)   | զծմ | 120  | 1,4    | 170,80   |
| 123 | Աստիճանների երեսապատում կոլրոլինով, սոսնձումով   | քմ  | 16,6 | 7,2    | 119,40   |
| 124 | Բազրիքներ մետաղական, փոշեներկված h=900մմ   | զծմ | 31,7 | 44,0   | 1393,95  |
| 125 | Բազրիքներ կոփված ապակուց 15մմ հաստ.  | քմ  | 29,5 | 36,0   | 1062,00  |
| 126 | Կորագիծ բազրիքներ կոփված ապակուց 15մմ հաստ.  | քմ  | 4,1  | 40,0   | 164,00   |
| 127 | Բռնածող չժանգոտվող պողպատից, Փ40մմ, ամրացվող պատին   | զծմ | 50,5 | 15,0   | 757,50   |
| 128 | Փայտե բազրիքներ ամֆիթատրոնում 200x30մմ կտրվածքի  | զծմ | 7,5  | 20,0   | 150,00   |
|     | <b>Ուղղամենը</b>   |     |      |        | 93636,37 |
|     | <b>Զեռուցում</b>   |     |      |        |          |
| 1   | Զեռուցման սարքերի տեղադրում  | էկմ | 93,4 | 1,59   | 148,81   |
| 2   | Այլումինե ջեռուցման մարտկոցներ H=500մմ   | սեկ | 283  | 3,85   | 1089,46  |
| 3   | Հատակի ջեռուցում քայլը 15սմ Փ16մմ  | քմ  | 29   | 5,60   | 162,40   |
| 4   | Բաշխիչ պահարան 1 ուրվագծով   | հատ | 1    | 72,92  | 72,92    |
| 5   | Բաշխիչ պահարան 2 ուրվագծով   | հատ | 1    | 81,61  | 81,61    |
| 6   | Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում Փ50մմ, ձևավոր մասերի տեղադրումով, փորձարկումով, լվացումով և քլորացումով | զծմ | 18   | 4,69   | 84,38    |
| 7   | Նույնը, Փ32մմ  | զծմ | 32   | 2,51   | 80,29    |
| 8   | Նույնը, Փ25մմ  | զծմ | 125  | 2,41   | 301,33   |
| 9   | Նույնը, Փ20մմ  | զծմ | 110  | 2,80   | 307,59   |
| 10  | Նույնը, Փ16մմ  | զծմ | 225  | 2,80   | 629,17   |
| 11  | Զեռուցման մարտկոցների թերմոստատների տեղադրում RTD-N, Dy=15մմ   | հատ | 16   | 9,94   | 159,05   |
| 12  | Զեռուցման մարտկոցների թերմոստատների տեղադրում RTD-N, Dy=20մմ   | հատ | 6    | 11,23  | 67,39    |
| 13  | Փականների տեղադրում Փ15մմ Texno-A Danfoss  | հատ | 16   | 31,18  | 498,91   |
| 14  | Փականների տեղադրում Փ20մմ Texno-A Danfoss  | հատ | 8    | 33,33  | 266,67   |
| 15  | Փականների տեղադրում Փ25մմ Texno-A Danfoss  | հատ | 10   | 37,07  | 370,70   |

| 1  | 2   | 3   | 4   | 5     | 6              |
|----|---|-----|-----|-------|----------------|
| 16 | Փականների տեղադրում Փ32մմ Texno-A Danfoss   | հատ | 2   | 47,03 | 94,07          |
| 17 | Ջեռուցման մարտկոցների դատարկման փականների տեղադրում RLV, Փ20մմ  | հատ | 16  | 12,50 | 199,99         |
| 18 | Օդահեռացման կախույր   | հատ | 24  | 3,21  | 76,98          |
| 19 | Ավտոմատ- օդահեռացուցիչ  | հատ | 12  | 5,25  | 62,95          |
| 20 | խողովակների ջերմամեկուսացում ռետինե մեկուսիչով Փ50մմ  | մ   | 18  | 1,22  | 21,99          |
| 21 | Նույնը, Փ32մմ   | մ   | 32  | 0,66  | 21,12          |
| 22 | Նույնը, Փ25մմ   | մ   | 85  | 0,63  | 53,55          |
| 23 | Նույնը, Փ20մմ   | մ   | 10  | 0,53  | 5,30           |
| 24 | Պաշտպանիչ ալիքածև խողովակ Փ16մմ   | մ   | 90  | 0,09  | 8,49           |
| 25 | Պաշտպանիչ ալիքածև խողովակ Փ20մմ   | մ   | 20  | 0,11  | 2,26           |
| 26 | Պատյան պողպատե խողովակից Փ32մմ L=0,2մ   | հատ | 14  | 0,23  | 3,17           |
| 27 | Պատյան պողպատե խողովակից Փ50մմ L=0,33մ  | հատ | 4   | 0,75  | 3,00           |
| 28 | Պատյան պողպատե խողովակից Փ70մմ L=0,2մ   | հատ | 2   | 0,54  | 1,08           |
| 29 | Մետաղյա կոնստրուկցիաներ խողովակների ամրացման համար  | կգ  | 90  | 0,53  | 47,70          |
|    | <b>Ընդամենը</b>   |     |     |       | <b>4922,32</b> |
|    | <b>Սահմանատակարարում</b>  |     |     |       |                |
| 1  | Արտաքին բլոկ RAS-10FSNM Qx=28kw (տեղադրում)   | կ-տ | 1   | 86,05 | 86,05          |
| 2  | Կասետային ֆանկոյլ FCU Qx=3kw RCIM-1,5FSN 2 (տեղադրում)  | կ-տ | 8   | 59,92 | 479,36         |
| 3  | Կասետային ֆանկոյլ FCU Qx=2kw RCIM-0,8FSN 2 (տեղադրում)  | կ-տ | 2   | 59,92 | 119,84         |
| 4  | Պղնձե խողովակների տեղադրում Փ 6,35մմ  | գծմ | 45  | 2,34  | 105,47         |
| 5  | Նույնը, Փ 12,7մմ  | գծմ | 40  | 3,19  | 127,72         |
| 6  | Նույնը, Փ 9,53մմ  | գծմ | 38  | 2,85  | 108,42         |
| 7  | Նույնը, Փ19,05մմ  | գծմ | 15  | 4,33  | 64,88          |
| 8  | Նույնը, Փ15,88մմ  | գծմ | 42  | 3,87  | 162,64         |
| 9  | Նույնը, Փ22,2մմ   | գծմ | 33  | 4,78  | 157,68         |
| 10 | Փ6,35մմ պղնձե խողովակների մեկուսացում ռետինե մեկուսիչներով  | գծմ | 40  | 0,38  | 15,40          |
| 11 | Նույնը, Փ12,7մմ   | գծմ | 35  | 0,57  | 19,81          |
| 12 | Նույնը, Փ9,53մմ   | գծմ | 38  | 0,48  | 18,07          |
| 13 | Նույնը, Փ19,05մմ  | գծմ | 15  | 0,79  | 11,89          |
| 14 | Նույնը, Փ15,88մմ  | գծմ | 42  | 0,68  | 28,53          |
| 15 | Նույնը, Փ22,2մմ   | գծմ | 33  | 0,79  | 26,16          |
| 16 | Էլ. մակուխ էկրանացված 2x1,5մմ   | մ   | 200 | 0,94  | 188,20         |
| 17 | Պլաստիկ խողովակների տեղադրում Փ20մմ, ձևավոր մասերի տեղադրումով, փորձարկումով, լվացումով և քլորացումով | գծմ | 120 | 1,99  | 238,96         |
| 18 | Պլաստիկ եռաքաշիչ Փ20մմ  | հատ | 50  | 0,33  | 16,42          |
| 19 | Պլաստիկ անկյունակ 90° Փ20մմ   | հատ | 40  | 0,34  | 13,59          |
| 20 | Պլաստիկ անկյունակ 45° Փ20մմ   | հատ | 10  | 0,34  | 3,40           |
| 21 | Պլաստիկ կցորդային Փ20մմ   | հատ | 4   | 0,32  | 1,27           |
| 22 | Մետաղական ամրակ   | հատ | 50  | 0,34  | 16,98          |
| 23 | Մալուխային ամրակ 300x7,8մմ  | հատ | 100 | 0,03  | 3,40           |
| 24 | Պղնձե անկյունակ Փ22,2մմ   | հատ | 10  | 0,57  | 5,66           |
|    | <b>Ընդամենը</b>   |     |     |       | <b>2019,77</b> |
|    | <b>2.Սարքավորում</b>  |     |     |       |                |
